

## **ՀՀ արդարադատության նախարարի այցը Արագածոտնի մարզ**

ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը դեկտեմբերի 19-ին այցելեց Արագածոտնի մարզ: Մարզպետարանում կայացավ մարզպետ Սարգիս Սահակյանի հանդիպումը նախարարի հետ: Առանձնազրույցի ընթացքում քննարկվեցին արդարադատության ոլորտում իրականացվող համագործակցված աշխատանքների ընթացքին վերաբերող հարցեր: Այնուհետև կայացավ խորհրդակցություն, որին մասնակցում էին նաև նախարարության պատասխանատու պաշտոնյաներ. Մարզպետի տեղակալները, աշխատակազմի ղեկավարը, մարզպետարանի կառուցվածքային սպորտաբաժանումների ղեկավարներ:

Մարզպետ Սարգիս Սահակյանը նշեց, որ արդարադատության համակարգի կառույցների հետ համագործակցված եւ արդյունավետ աշխատանքներ են ընթանում: Նա ներկայացրեց համատեղ իրականացվող մի շարք հարցերի իրականացման ընթացքը: Մասնավորապես առանձնացվեց համայնքների սեփական եկամուտների հավաքագրմանը, խոշոր հարկատուների պարտավորությունների կատարմանը, էլեկտրական բաշխիչ ցանցերի գործունեությանը վերաբերող խնդիրները եւ այլ հարցերը: Մարզպետը եւ նախարարը պայմանավորվեցին քննարկված հարցերին ընթացք տալ առաջիկա համագործակցության ընթացքում՝ արդարադատության նախարարության լիազորությունների եւ իրավասության շրջանակում:

Խորհրդակցության ավարտին կայացավ քաղաքացիների ընդունելություն, որի մասին հանրությունը մարզպետարանի կողմից նախապես տեղեկացված էր եղել: Անձնական հարցերով իրենց խնդիրները ներկայացրին համայնքներից ժամանած բնակիչներ, որոնց դիմումների վերաբերյալ արվեցին պարզաբանումներ, տրվեցին համապատասխան հանձնարարականներ:

Այնուհետև մարզպետի ուղեկցությամբ կայացավ նախարարի այցը արդարադատության նախարարության համակարգում գործող մարզային կառույցներ՝ Աշտարակի նոտարական գրասենյակ, ՔԿԱԳ գրասենյակ, պետոեգիստր, ԴԱՀԿ, ինչպես նաև Կարբիում տեղակայված ՀՀ ԱՆ «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ: